

ԱԳՐԵՍԻՎԱՅԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ ՈՒՆԵՑՈՂ 12-14 ՏԱՐԵԿԱՆ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա.Կ. Գևորգյան

Հովհ. Թումանյանի անվ. Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ,
հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոն, Վանաձոր, Հայաստան

ОСОБЕННОСТИ СОЦИАЛЬНОГО ВОСПРИЯТИЯ ПОДРОСТКОВ 12-14 ЛЕТ С ВЫСОКИМ УРОВНЕМ АГРЕССИИ

А.К. Геворгян

*Ванадзорский государственный педагогический институт им. Ов. Туманяна
кафедра психологии и социологии, Ванадзор, Армения*

Здоровый образ жизни поколений, эффективная организация процесса обучения и воспитания до сих пор являются важной, но нелёгкой задачей. Проблема изучения причин агрессивности подростков в кризисных условиях и особенностей восприятия социальных отношений в окружающей среде чрезмерно важна и актуальна, чему и посвящена статья.

PECULIARITIES OF SOCIAL PERCEPTION OF 12-14 YEARS OLD ADOLESCENTS DEMONSTRATING HIGH LEVEL OF AGGRESSION

A.K. Gevorgyan

*Vanadzor state pedagogical institute named after Hovh. Tumanyan,
department of psychology and sociology, Vanadzor, Armenia*

Healthy lifestyle of generations and effective organization of their study and education continue being a key challenge, hence the study of the reasons behind aggressive behavior of adolescents in problematic and crisis situations and their perception of surrounding social relations is a highly urgent and demanding issue. These aspects are touched upon in this article.

Հանգուցային բառեր.

ագրեսիա,
ալտրուիզմ,
ինքնագնահատական,
հաղորդակցական
դիրքորոշում,
սոցիալական ընկալում

Ключевые слова:

агрессия,
альтруизм,
самооценка,
коммуникативные
установки,
социальное восприятие

Key words:

aggression,
altruism,
self-assessment,
communicative orientation,
social perception

Սերունդների առողջ ապրելակերպը, նրանց ուսուցման և դաստիարակության գործընթացի արդյունավետ կազմակերպումը կարևորագույն խնդիր է մինչ օրս, ուստի և դժվար, ճգնաժամային պայմաններում դեռահասների ագրեսիվության պատճառները և միջավայրում տեղի ունեցող սոցիալական հարաբերությունների ընկալման առանձնահատկությունների հիմնահարցի ուսումնասիրությունը ավելի քան արդիական է և կարևոր:

Հարցը նրանում է, որ դեռահասները, ի տարբերություն մյուս տարիքային

խմբերի, ավելի շատ են տուժում երկրում անկայուն սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակից, բարոյական մշակութային արժեքների փոփոխությունից, ընդհանրապես երկրում անկայուն դրությունից: Նրանք կորցնում են այսօր անհրաժեշտ արժեքների և իդեալների կողմնորոշումը, որը պայմանավորված է մանկության ու հասունության միջև գտնվելու հանգամանքով՝ դեռահասն առանց այդ էլ «դատապարտված է» հասարակության մեջ ներառվելու, ինչպես նաև նրանում հարմարվելու լուրջ խնդիրներին: Ճգնաժամային ժամանակներում էլ, երբ ամբողջ հասարակությունը հարմարված չէ, նա կրկնակի է վերապրում դրանում գոյություն ունեցող պայմանների ծանրությունը:

Բացի այդ կենսագործունեության անբարենպաստ պայմանները, սոցիալ-հոգեբանական լարվածությունը, բազմաթիվ անհարմարություններն ու դեֆիցիտները, հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացումներն ու դրանց փոփոխությունների միտումները ստեղծում են հոգեբանական լարվածություն, ինչն ուղղակիորեն անդրադառնում է նաև դեռահասների հոգեկան ոլորտի, նրա վարքագծի վրա:

Դեռահասների ագրեսիվ վարքագիծը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որին անդրադարձել են հայրենական և արտասահմանյան շատ գիտնականներ (Ա. Բանդուրա, Դ. Մայերս, Ի. Կոն, Լ. Ֆիլոնով, Դ. Ֆելդշտեյն, Է. Էրիկսոն, Դ. Մունն, Գ. Կապլան): Սակայն իր հերթին ագրեսիվության արդյունքում փոփոխություն են կրում դեռահասների ճանաչողական, հուզական, անհատական առանձնահատկությունների և անձի կառուցվածքային այլ բաղադրամասերի գործառույթները:

Այս հանգամանքը մեզ համար հիմք է հանդիսացել որպեսզի մեր աշխատանքում որպես ուսումնասիրության հիմնական առարկա ընտրենք դեռահասների ագրեսիվությունը և նրանց սոցիալական ընկալման առանձնահատկությունները:

Ուստի և կատարել ենք հետազոտություն՝ փորձելով պարզել դեռահասների ագրեսիայի բարձ մակարդակի կապը միջանձնային հարաբերություններում դեռահասների ունեցած խնդիրների, ոչ ադեկվատ ինքնագնահատականի, դիրքորոշման և ծնողների հետ ունեցած հարաբերություններից:

Հետազոտության սկզբնական փուլում կատարվել է հետազոտվող հիմնախնդրին վերաբերող մասնագիտական գրականության մեթոդաբանական վերլուծություն: Այնուհետև ճշտվել և մշակվել են հետազոտության իրականացման ռազմավարությունը, համակազմը, հետազոտության մեջ

ընդգրկվել են 12-14 տարեկան 120 դեռահասներ, որոնք կազմել են 2 խումբ: Առաջինն ընդգրկել է նորմատիվ վարքի տեր անչափահասներ՝ համեմատական վերլուծություն կատարելու համար (այսուհետ «նորմա» խումբ), մյուսները մտել են «ագրեսիվության բարձր մակարդակ ունեցող դեռահասներ» (այսուհետ «ագրեսիվ») խմբի մեջ: «Նորմա» խումբը կազմեցին միևնույն տարիքի 60 դեռահասներ, նորմատիվ վարքով, որոնք ընտրվել են Լոռու մարզի 4 տարածաշրջաններից: «Ագրեսիվության բարձր մակարդակ ունեցող դեռահասներ» խմբի անչափահասների ընտրությունը 60 դեռահաս ևս կատարվել է Լոռու մարզի միևնույն 4 տարածաշրջաններից: Աշխատանքները իրականացվել են հետևյալ փուլերով և մեթոդներով.

- Ագրեսիվության մակարդակի ախտորոշում (Լ.Գ. Պոչեբուտի հարցարան, Ֆրեյբուրգսկյան հարցարան) [2]:
- Դեռահասների միջանձնային փոխհարաբերությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ախտորոշում (Տ. Լիրիի մեթոդիկա) [4]:
- Դեռահասների և ծնողների փոխադարձ վերաբերմունքի բնութագրերի բացահայտում (մեթոդիկա «ADOR») [3]:
- Դեռահասի հաղորդակցական դիրքորոշման ախտորոշում (Ա.Ն. Իվաշովա, Ե.Վ. Զաիկա) [1]:
- Հավակնությունների մակարդակի և ինքնագնահատականի ախտորոշում (Տ.Դեմբո, Ս.Յա Ռուբինշտեյն) [6]:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու մի շարք հետաքրքիր օրինաչափություններ, մասնավորապես՝ Տ. Լիրիի միջանձնային ախտորոշման մեթոդիկայի կիրառման արդյունքում շեշտադրվեց ագրեսիվ դեռահասների վարքային հակադիր դրսևորումների միաժամանակյա արտահայտվածություն, որոնք են եսասիրությունն ու ակտրուիզմը, ավտորիտարիզմն ու ենթարկվողականությունը, կասկածամտությունը և կախվածությունը, որը վկայում է դեռահասների ներքին կոնֆլիկտայնության, սեփական եսի ու հակադիր պատկերացումների համաժամանակյա արտահայտվածության մասին:

Ուշադրություն դարձնելով նշված հատկանիշների ընդգծվածության աստիճանին, հարկ ենք համարում առանձին նկարագրել դրանք: Դրանցից է ագրեսիան, որի բարձր ցուցանիշը փաստում է այն մասին, որ հետազոտվողները կոպիտ և թշնամաբար են տրամադրված շրջապատողների

նկատմամբ, կտրուկ են հարաբերություններում, հարձակվողական, կարող են նույնիսկ երբեմն դրսևորել ասոցիալ վարքագիծ:

Մյուս հատկանիշը կասկածամտությունն է. նման դեպքերում դեռահասը կասկածամիտ է, նեղացկոտ, կասկածում է ամեն հարցում, հիշաչար է, բոլորից բողոքում է անընդհատ, դժգոհում է ամեն ինչից (բնավորության շիզոֆրենիայի տիպ):

Ալտրոփստական վերաբերմունքի բարձր ցուցանիշը (13-16 միավոր) վկայում է այն մասին, որ այսպիսի դեռահասները գերապատասխանաբար են, միշտ զոհաբերում են սեփական հետաքրքրությունները, ձգտում օգնել և ցավակցել բոլորին, շատ հարցերում իրենց վրա են վերցնում պատասխանատվությունը: Սակայն այս ամենը միայն ցուցադրական, արտաքին բնույթ ունի ուստի և նրանց դրսևորած վարքը կարող ենք համարել «կեղծ» ալտրոփզմ:

Որպես հետևություն կարող ենք պնդել, որ ագրեսիայի բարձր մակարդակը ուղիղ համեմատական է դեռահասների ոչ ադեկվատ սոցիալական ընկալման հնարավորություններին: Այսինքն՝ ինչքան մեծ է ագրեսիայի բարձր մակարդակը, այնքան ցածր է իրականության օբյեկտիվ գնահատման կարողությունը, միջավայրի հարաբերությունների նկատմամբ հանդուրժողականությունը:

Ոչ ադեկվատ ինքնագնահատականի և ագրեսիայի կապին անդրադարձել են Դ. Մուննը, Գ. Կապլանը և այլք, նրանք դեռահասների ագրեսիվությունը կապում էին ինքնահարգանքի անգիտակցաբար իջեցված ցածր մակարդակի հետ, որը նաև առաջ է քաշում հարմարման որոշակի դժվարություններ, որում դեռահասը ապաստան է գտնում ագրեսիայի միջոցով: Սակայն մենք յուրովի ենք մոտեցել այս հարցին օգտագործելով Տ. Դեմբոյի, Ս. Ռուբինշտեյնի հավակնությունների մակարդակի և ինքնագնահատականի ախտորոշման մեթոդիկան, որը հնարավորություն է տալիս պարզելու, թե ինքնագնահատականի հատկապես որ գործոններն են ոչ ադեկվատ գերագրեսիվ դեռահասների մոտ և այնուհետև ինչպիսին է հավակնությունների մակարդակը ի տարբերություն «նորմա» խմբի դեռահասների: Արդյունքները փաստեցին, որ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասների մոտ հիմնականում նկատվում է ցածր ինքնագնահատականի միտում գրեթե բոլոր գործոնների նկատմամբ՝ հեղինակություն, ինքնավստահություն, արտաքին տեսք, խելք, ընդունակություն: Բացառություն է կազմում բնավորությունը. այն գնահատելով միջին և նույնիսկ բարձր մատնանշում է այն մասին, որ գերագրեսիվ դեռահասները օբյեկտիվորեն չեն

կարողանում ոչ զգալ, ոչ էլ գնահատել իրենց ագրեսիվության նկարագիրը, նույնիսկ նրանց կարծիքով դա իրենց վարքի ամենաօպտիմալ տարբերակն է:

Հետաքրքրական է այն, որ ագրեսիվ դեռահասների մոտ ցածր ինքնագնահատականը զուգորդվում է բարձր հավակնությունների մակարդակի հետ, որը ինքնին հանդիսանում է ներքին կոնֆլիկտայնության արդյունք, հավակնությունների բարձր մակարդակ ունեն նաև «նորմա» խմբի դեռահասները, միայն թե այստեղ այն չի ուղեկցվում ցածր ինքնագնահատականի հետ:

Հատուկ դիտման է արժանի անձի հաղորդակցական դիրքորոշման ախտորոշման մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացված հետազոտության տվյալները (նկար 1) [1]:

Ելնելով ինքնագնահատականի ախտորոշման մեթոդիկայի կիրառման արդյունքներից, ըստ որի գերագրեսիվ դեռահասները չեն կարողանում ադեկվատ գնահատել իրենց, նպատակահարմար գտանք առաջին փուլում հարցարանը լրացնել հոգեբանների, ծնողների և ուսուցիչների հետ: Այն հարցին, թե նշված 12 տարբերակներից որն է ավելի մոտ բնութագրում հետազոտվողին, ագրեսիվ տղա դեռահասների 35% հայտնվեց «Երեխաներդաշնակ» մակարդակում, ինչը բնութագրվում է հետևյալ կերպ. հաղորդակցվելիս յուրահատուկ է, սրամտում է, խաղում է, խաբեություն է անում ի նպաստ իր հետաքրքրությունների, ձևացնում է և երևակայում է: 45% հայտնվեց «Երեխա-կոնֆլիկտային» մակարդակում, որին հատկանշական է հետևյալը. ամեն ինչն անում է թարս ու շիտակ, առիթ է ստեղծում դիտողությունների: Գերագրեսիվ աղջիկ դեռահասների 48% բնութագրվեցին որպես «Մեծահասակ-սահմանափակված», որոնց բնորոշ են հետևյալ բնութագրերը. ապրում է երազանքների աշխարհում, ամեն ինչում կասկածում է, ինքն իր հետ հակասությունների, փնտրտուքների մեջ է, չի կարողանում կյանքի կոչել իր մտադրությունները, իսկ 45% «Մեծահասակ-կոնֆլիկտային» ունի հայացքների անփոփոխ համակարգ, տրամաբանորեն է հիմնավորում իր համոզմունքները, հորինում է իր համար թշնամիներ, վատ է հասկանում մարդկանց:

Դեռահասների հետ հետազոտության երկրորդ փուլի աշխատանքներում տրվել է հետևյալ հրահանգը. նշված 12 տարբերակից ընտրեք այն արտահայտությունները, որի հատկանիշները ձեզ համար առավել ցանկալի են: Արդյունքները հետևյալ կերպ էին արտահայտված. աղջիկների 93% մոտ առկա է «Ծնող-ձևական» միտումը, ինչը փաստում է այն մասին, որ դեռահասը պահանջում

է պատասխանատու վարքագիծ և կանոնների ու նորմերի խիստ պահպանում, հաճախ գոհունակություն կամ դժգոհություն է արտահայտում ուրիշների վարքագծի նկատմամբ:

Երկու մակարդակներում էլ գտնվող տղաների համար ցանկալի դիրք է համարվում «Ծնող-կոնֆլիկտային» դիրքը, որին բնորոշ են հետևյալ հատկանիշները. հարաբերություններում համառորեն փնտրում է թերություններ, կտրականապես պահանջում է ենթարկվել իրեն, հաճախ պարտադրում է իր հեղինակությունը, չի հանդուրժում հակադրություններ:

Այս մեթոդիկայի արդյունքում ինչպես տեսնում ենք կրկին շեշտադրվում է հեղինակությունը, ուրիշների կողմից ընդունված լինելը:

Խոսելով դեռահասի ագրեսիվության և սոցիալական ընկալման գործընթացների մասին, հարկ է նշել ընտանիքի առաջնային դերի մասին, դեռահասը մեծանում է ընտանիքում, ուստի և այն հանդիսանում է երեխայի սոցիալիզացման առաջին հիմնական օղակը, կյանքի օրենքների ճանաչման ամենաստույգ աղբյուրը: Հաշվի առնելով վերը նշվածը կիրառել ենք նաև «ADOR» կոչվող մեթոդիկան, որը պարզաբանում է դեռահասների կարծիքը իրենց ծնողների վերաբերյալ:

Ծնողների վարքի և դրա նկատմամբ դեռահասների վերաբերմունքի հետազոտության արդյունքում պարզվել է, որ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասները իրենց ծնողների վերաբերմունքը գնահատում են դիրեկտիվ, թշնամական: Արդյունքների վերլուծությունում դիտարկվում էին նաև սեռային տարբերություններ.

1. Գերագրեսիվ տղաների գնահատականը իրենց մայրերին՝ նրանց ցուցանիշներում գերակշռում է թշնամանքն (83%) ու ավտորիտարությունը (92%): Տղա դեռահասի նկատմամբ մոր թշնամությունը բնորոշվում է միջանձնային փոխհարաբերություններում մոր կողմից դրսևորված ագրեսիվության և չափազանց խստության մեջ: Տղան ընկալվում է որպես մրցակից, որին անհրաժեշտ է ճնշել՝ սեփական կարևորությունը հաստատելու համար:
2. Հետազոտության ավտորիտարության սանդղակը ցույց է տալիս, որ որդու հետ փոխհարաբերություններում մոր ինքնուրույնությունն ընկալվում է որպես իշխանության միանշանակ թելադրանք: Դիտարկվում է նաև այնպիսի միտում, որ մայրը երեխային չի ընկալում որպես ինքնուրույն անձ, ով ունի իր սեփական մտքերը, զգացմունքները, պատկերացումները: Մայրը ներկայա-

նում է «կույր» իշխանության, ձգտումների ուժ, որին բոլորը պետք է ենթարկվեն:

3. Գերագրեսիվ տղաների գնահատականն իրենց հայրիկներին: Ցուցանիշների քննարկումները ցույց են տալիս, որ այստեղ ևս գերակշռում է ավտորիտարության սանդղակը (70%): Փոխհարաբերությունը հիմնվում է ուժի և դաժանության վրա: Հորը չի հետաքրքրում որդու նախասիրությունները, ծանոթների շրջանակը, առաջադիմությունը դպրոցում: Հաճախ նրան նյարդայնացնում է նաև տղայի կողմից իրեն դիմելը: Հոր կարծիքով որդին պետք է ամեն ինչ ինքնուրույն իմանա:
4. Աղջիկների գնահատականը մոր նկատմամբ ցուցանիշներում գերակշռում են դիրեկտիվության (80%), ավտորիտարության (64%) սանդղակները: Իրենց մայրերին գնահատելով դիրեկտիվ՝ աղջիկ դեռահասները նկատի ունեն խիստ և դաժան հսկողությունն իրենց հանդեպ: Այդպիսի մայրերը գերադասում են խիստ պատիժը, համառորեն կարծելով, որ իրենք միշտ ճիշտ են, իսկ աղջիկները դեռ փոքր են խնդիրներ քննարկելու համար:
5. Ավտորիտարության սանդղակի ցուցանիշներում մայրերը գրեթե հոգ չեն տանում երեխայի նկատմամբ, չեն զբաղվում նրանց դաստիարակությամբ, չեն կիսում նրանց զգացմունքները և ապրումները: Այսպիսի հարաբերություններում գերակշռում է օտարացումը:
6. Աղջիկ դեռահասների գնահատականը հայրերի նկատմամբ. գերակշռում է ավտորիտարության (65%) և թշնամանքի (76%) սանդղակները: Հոր վերաբերմունքը գնահատելով թշնամական՝ դեռահասը նկատի ունի այն, որ հարաբերությունների կառուցման այսպիսի ոճը տանում է հոր և աղջկա միջև հուզական կապերի խախտմանը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է լարվածության աճին և դեռահասի անկայունության: Իրենց հայրերին գնահատելով ավտոնոմ՝ դեռահաս աղջիկները նրանց ընդունում են որպես մարդու, ում հետ հնարավոր չէ համագործակցել կամ բանակցել, համարելով, որ նա տարանջատված է ընտանիքի խնդիրներից: Համոզված են, որ հորը չի հետաքրքրում, թե ինչ է կատարվում ընտանիքում: Հաճախ նրա գործողությունները հակասում են ընտանիքի կարիքներին և պահանջներին:

Ամփոփելով հետազոտության արդյունքների վերլուծությունը համոզված կարող ենք եզրակացնել, որ գերագրեսիվ դեռահասների և ծնողների փոխհարաբերություններում դիտարկվում է հոգեբանական անջրպետ, որն իր հերթին արգելում է մտերմիկ, հուզական կապերի զարգացումը, ինչը հանգեցնում է փոխադարձ անվստահության, դեռահասների հիմնախնդիրներին ծնողների անտեղյակության, օտարացման, միայնակության:

Ագրեսիվությունը դեռահասների կողմից հանդիսանում է որպես պաշտպանական ռեակցիա սեփական անձը, իրավունքներն ու ազատությունը ընդգծելու բողոք: Ուստի, ելնելով հետազոտության արդյունքներից, հարկ ենք համարում նշել, որ ագրեսիայի մակարդակը իջեցնելու, իսպառ վերացնելու համար ծնողները պետք է վերանայեն ծնողական վերաբերմունքը, երեխաների նկատմամբ կիրառվող ազդեցության ձևերը, քանզի ագրեսիան ավելի հեշտ է կանխարգելել, քան ավելի ուշ՝ շտկել:

Ընդհանուր առմամբ հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների անձնային հենքային բաղադրամասերի ձևավորման գործընթացը վտանգված է: Ելնելով դեռահասների մոտ դիտարկվող բացասական երևույթների արտահայտվածության միտումներից, միջանձնային հարաբերություններում դրսևորվող հակասական որակներից, որոնք զուգորդվելով ցածր ինքնագնահատականով և հավակնությունների բարձր մակարդակով, ինչպես նաև զրկված լինելով ծնողական ուշադրությունից և հուզական ջերմ

վերաբերմունքից դեռահասներն իրենց զգում են խորթ ու օտարացած, ինչն էլ ստիպում է դեռահասին ագրեսիվությամբ հակազդել շրջապատող միջավայրի ազդակներին:

Այսպիսով՝ մեր կողմից կատարված հետազոտության տեսական և գործնական ընդհանրացումները օգտակար կլինեն ծնողներին և մանկավարժներին դեռահասների դաստիարակման և արտաքին միջավայրում նրանց հարմարման գործընթացում, ինչպես նաև կօժանդակեն երեխաների ագրեսիվ վարքը նախականիելու և սոցիալական փոխհարաբերությունները ճիշտ կառուցելու համար:

Գրականություն

1. Ивашов А.Н., Заика Е.В. Методика исследования коммуникативных установок личности. Вопросы психологии. М.: 1991;5.
2. Платонов Ю.П.: Основы этнической психологии. Учеб. пособие. СПб.: Речь; 2003. с.383-5.
3. Головей Л.А., Рыбалко Е.Ф. Практикум по возрастной психологии: Учеб. пособие. СПб.: Речь; 2002. с.640-52.
4. Энциклопедия психодиагностики. PsyLab.info. с.157.
5. Семенюк Л.М. Психологические особенности агрессивного поведения подростков и условия его коррекции. МПСИ; Флинта: 2003. с.96.
6. Яньшин П.В. Клиническая психодиагностика личности. Учебно-методическое пособие. 2-е изд., испр. СПб.: Речь; 2007. с.320.

Ստացվել է՝ 22.08.2013